ԱՐԱԳ ՇԱԽՄԱՏԻ ՍԻՐՈՂԱԿԱՆ ՄՐՑԱՇԱՐ

/ԱՆՀԱՏԱԿԱՆ-ԹԻՄԱՅԻՆ/

ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

24.05.2025, 12:00

1. **ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ**
   Հայաստանի շախմատի ակադեմիա հիմնադրամ
2. **ԳԼԽԱՎՈՐ ՀՈՎԱՆԱՎՈՐ**
   Ալֆա Ֆարմ ՓԲԸ
3. **ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ**
   Մրցաշարը կանցկացվի 3 խմբով՝ Ա, Բ, Գ:
   Ա և Բ մրցաշարերը կացնկացվեն անհատական և թիմային ձևաչափով, ըստ ՖԻԴԵ-ի շախմատի կանոնների, շվեյցարական մրցակարգով՝ 7 խաղափուլով:
   Գ մրցաշարը կանցկացվի թիմային ձևաչափով, ըստ ՖԻԴԵ-ի շախմատի կանոնների, շվեյցարական մրցակարգով՝ 6-7 խաղափուլով /կախված մասնակից թիմերի քանակից/:
   Ա մրցաշարին կարող են մասնակցել բոլոր չափահաս շախմատիստները, ում և՛ ազգային, և՛ միջազգային վարկանիշը չի գերազանցում 2100-ը /2025 թվականի մայիսի 1-ի դրությամբ/:
   Բ մրցաշարին կարող են մասնակցել բոլոր չափահաս շախմատիստները, ում և՛ ազգային, և՛ միջազգային վարկանիշը չի գերազանցում 2000-ը /2025 թվականի մայիսի 1-ի դրությամբ/:
   Գ մրցաշարին կարող են մասնակցել մինչև 18 տարեկան շախմատիստները, ում և՛ ազգային, և՛ միջազգային վարկանիշը չի գերազանցում 2150-ը /2025 թվականի մայիսի 1-ի դրությամբ/:
   *Մասնակիցների թե՛ ազգային, թե՛ միջազգային վարկանիշները չպետք է գերազանցի վերը նշված վարկանիշը:
4. **ՄՐՑԱՆԱԿՆԵՐ**

   ԱՐԱԳ ՇԱԽՄԱՏԻ ՍԻՐՈՂԱԿԱՆ ՄՐՑԱՇԱՐԸ **կանցկացվի 2 փուլով:**

   2 փուլերի արդյունքում հաղթող թիմի համար՝ 600 000 ՀՀ դրամ/Ա մրցաշար/ և 400 000 ՀՀ դրամ/Բ մրցաշար/:

   Գ ՄՐՑԱՇԱՐԻ 2 փուլերի արդյունքում հաղթող թիմի համար՝ անլար ականջակալ:

   ***Թիմային մրցանակները նախատեսված են երկու անձի համար:**

   Մրցաշարերի առաջին փուլի համար նախատեսված են հետևյալ մրցանակները.

Ա մրցաշար		
Անհատական մրցանակներ	**I**	**Մոլի նվեր քարտ**
	II	**Սմարթ ժամացույց**
	III	**Անլար ականջակալ**
Թիմային մրցանակներ	**I** /2 անձ/	**Հանգիստ Հայաստանի հանգստյան վայրերից մեկում**
	II /2 անձ/	**Պլանշետ Samsung**
	III /2 անձ/	**Ալֆա-Ֆարմ նվեր քարտ/20,000 ՀՀ դրամ/**
Հատուկ մրցանակներ	լավագույն կին մասնակից	**Կոսմետիկ փաթեթ**
	լավագույն արդյունք ցույց տված ոչ վարկանիշային թիմ /2 անձ/	**Ալֆա-Ֆարմ նվեր քարտ**
Բ մրցաշար		
Անհատական մրցանակներ	**I**	**Պլանշետ Samsung**
	II	**AWI հայկական ժամացույցների խանութի նվեր քարտ**
	III	**Անլար ականջակալ JBL**
Թիմային մրցանակներ	**I** /2 անձ/	**Մոլի նվեր քարտ**
	II /2 անձ/	**Հյուրասիրություն ռեստորանում**
	III /2 անձ/	**Հայաստանի ժամանցի վայրերից մեկի սերտիֆիկատ**
Հատուկ մրցանակներ	լավագույն կին մասնակից	**Կոսմետիկ փաթեթ**
	լավագույն արդյունք ցույց տված ոչ վարկանիշային թիմ /2 անձ/	**Ալֆա-Ֆարմ նվեր քարտ**
Գ մրցաշար		
Հիմնական մրցանակներ	**I**	**Երևան Պարկի տոմսեր**
	II	**Թատրոնի տոմսեր**
	III	**Կինոդիտման տոմսեր**
Հատուկ մրցանակներ. լավագույն արդյունք ցույց տված մասնակից	1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ խաղատախտակ /առնվազն 5 խաղ խաղալու դեպքում/	**«Ակադեմիայի Գավաթ-2025» արագ շախմատի մրցաշարի 3-րդ փուլի անվճար մասնակցություն**
	Աղջիկ մասնակից /առնվազն 4 խաղ խաղալու դեպքում/	**Կոսմետիկ փաթեթ**

5. **ԺԱՄԿԵՏՆԵՐ**

Մրցաշարերի առաջին փուլը տեղի կունենա 2025 թվականի մայիսի 24-ին, ժամը 12:00-ին:

6. **ՄՐՑԱԿԱՐԳ**

Ա և **Բ** մրցաշարերը կացնկացվեն անհատական և թիմային հաշվարկով:

Անհատական հաշվարկ

Հավասար միավորներ վաստակելու դեպքում մրցանակները չեն կիսվում, իսկ տեղերը կորոշվեն. հատված Բուհգոլցով, այնուհետև Բուհգոլցով, անձնական հանդիպումների արդյունքի /արդյունքների/ և սև գույնով խաղացած պարտիաների քանակով:

Թիմային հաշվարկ

Թիմում մասնակցիների քանակը չպետք է գերազանցի 2-ը, և թիմային մրցանակային տեղերը որոշելու համար հաշվի է առնվելու թիմի մասնակիցների 2-ի արդյունքը:

Թիմի մասնակիցների կազմը երկու փուլերի ընթացքում փոփոխության ենթակա չէ: Թիմի մասնակիցները մրցաշարի ընթացքում չեն խաղալու միմյանց հետ:

Մրցանակների հավակնող թիմերի հավաքած միավորների հավասարության դեպքում հաշվի է առնվում անհատական մրցաշարում թիմի մասնակիցների ավելի բարձր տեղ գրաված արդյունքը:

Գ մրցաշարը կացնկացվի թիմային հաշվարկով.

Մրցաշարը կանցկացվի թիմային հաշվարկով՝ 4 խաղատախտակով (ցանկության դեպքում + 1 պահեստային խաղացող): Այն խաղացողները, ովքեր մեկ կամ ավելի խաղ խաղացել են որևէ թիմի կազմում, իրավունք չունեն խաղալու այլ թիմի կազմում հաջորդ փուլի ընթացքում:

Յուրաքանչյուր մրցախաղում թիմային հաղթանակը գնահատվում է 2 միավոր, ոչ-ոքին՝ 1 միավոր, պարտությունը՝ 0 միավոր: Մրցանակների հավակնող թիմերի հավաքած միավորների հավասարության դեպքում հաշվի է առնվում թիմի անդամների անհատական արդյունքների հանրագումարը, թիմերի միջև անհատական հանդիպման արդյունքը, ըստ խաղատախտակների վրա ցույց տված արդյունքի (1, 2, 3, 4 խաղատախտակներ):

Եթե այդ ցուցանիշն էլ է հավասար, ապա անցկացվում է լրացուցիչ մրցախաղ (մրցաշար-մրցախաղ՝ կայծակնային խաղի կանոններով յուրաքանչյուր խաղացողին տրվում է 5-ական րոպե):

Եթե խաղատախտակների վրա 2 և ավելի խաղացողներ ձեռք են բերել հավասար միավորներ, ապա որպես լրացուցիչ ցուցանիշ հաշվի է առնվելու իրենց հակառակորդների միջին գործակիցները:

7. **ԺԱՄԱԿԱՐԳ**

10 րոպե մինչև պարտիայի ավարտը (2 վայրկյան հավելումով՝ յուրաքանչյուր քայլին, սկսած առաջին քայլից):

8. ՄՈՒՏՔԱՎՃԱՐ

Ա, Բ և Գ մրցաշարերի մասնակցության վճարը յուրաքանչյուր թիմի համար կազմում է 20 000 ՀՀ դրամ:

Ա և Բ մրցաշարերում անհատական մասնակցության դեպքում վճարը կազմում է 10 000 ՀՀ դրամ: Փոխանցումները անհրաժեշտ է կատարել հետևյալ բանկային հաշվին՝Շահառու՝ «Շախմատի ակադեմիայի ակումբ» ՍՊԸ,Բանկ՝ Ամերիաբանկ ՓԲԸ, Հ/հ՝ 1570091773770100

Փոխանցում կատարելիս նպատակ դաշտում նշել գրանցվող թիմի/անձի անունը, կոնտակտային հեռախոսահամար, մասնակցության վճար:

9. ԳՐԱՆՑՈՒՄ

Հայտեր ներկայացնելու վերջնաժամկետն է 2025 թվականի մայիսի 22-ը, ժամը 18:00-ն:

Հայտը **/Թիմի անուն, շախմատիստների անուն, ազգանուն, հայրանուն, ծննդյան տվյալներ, կարգ/վարկանիշ, կոնտակտային հեռախոսահամար/** կարող եք ուղարկել info@chessacademy.am էլեկտրոնային հասցեին:

10. ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐ

Մրցաշարը կանցկացվի Հայաստանի շախմատի ակադեմիայում /ք. Երևան, Շևչենկո 34/:

11. ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ

Հեռ՝ +374 10 448473, +374 43 448473

Ա և Բ մրցաշարերում նոր գրանցվող թիմերը/թիմի անդամները/, որոնք երբևէ չեն մասնակցել Ալֆա Ֆարմի և ակադեմիայի կողմից կազմակերպած ՇԱԽՄԱՏԻ ԱԿՈՒՄԲԱՅԻՆ ԹԻՄԱՅԻՆ ՄՐՑԱՇԱՐԻՆ, ԱՐԱԳ ՇԱԽՄԱՏԻ ՄՐՑԱՇԱՐԻ միայն առաջին փուլին կարող են մասնակցել ԱՆՎՃԱՐ/10 թիմ Ա մրցաշարում, 10 թիմ Բ մրցաշարում/: